 դոկտորական և թեկնածուական պաշտպանությունների քանակը

Աղյուսակ 2.4.1

030 մասնագիտական խորհուրդ	դոկտորական	թեկնածուական	Ընդամենը
«Ճարտարապետություն» քննազավար	1	3	4
«Շինարարություն» քննազավար	-	3	3
Ընդհանուր	1	6	7

2019թ. առկա և հեռակա սապիրանտուրա և դոկտորանտուրա
 ընդունելության տվյալները (ՀՀ քաղաքացիների համար)

Աղյուսակ 2.4.2

Մասնագիտություն	Ասպիրանտներ		Դոկտորանտներ	Ընդամենը
	առկա	հեռակա		
ԺԸ.00.01	2	1	1	4
Ե.23.02	1	1	-	2
Ե.23.03	-	-	1	1
Ընդհանուր	3	2	2	7

Ասպիրանտների, հայցորդների և դոկտորանտների թվաքանակը
 25.12.2019թ. դրությամբ (ՀՀ և արտասահմանցի քաղաքացիների համար)

Աղյուսակ 2.4.3

Ասպիրանտներ				Հայցորդներ		Դոկտորանտներ	Ընդամենը
Առկա	Հեռակա	Առկա վճարովի (արտասահմանցի)	Հեռակա վճարովի (արտասահմանցի)	Վճարովի	Վճարովի (արտասահմանցի)		
7	14	1	-	13	1	6	42

3. ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ՀԱՄԱԳՈՐԾԱԿՑՈՒԹՅՈՒՆ

ՃՇՀԱՀ միջազգային կապերը ներառում է արտասահմանյան քաղաքացիների ուսումնառության, համալսարանի միջազգային համագործակցության, գիտահետազոտական, մարզամշակութային, միջազգային ծրագրերի մասնակցության ոլորտներ:

Համալսարանն ունի միջազգային համագործակցության 59 գործող համաձայնագիր: 2019թ.-ին կնքել է համագործակցության 8 և վերակնքվել 1 համաձայնագիր:

3.1 Ուսումնական ոլորտ

Արտերկրի քաղաքացիների ուսուցումը, որպես ուսումնառողներ իրականացվել է պետպատվերի և պայմանագրային հիմունքներով:

2018-2019 ուստարում համալսարանում ուսումնառել է 192 արտասահմանցի (սփյուռքահայ – 175, այլազգի սովորող - 17).

Սփյուռքահայեր – 175, անվճար կարգավիճակով - 18, վճարովի կարգավիճակով – 157

Այլազգի սովորողներ – 17 վճարովի կարգավիճակով

2019թ. համալսարանն ունեցել է 63 արտասահմանցի շրջանավարտ.

Բակալավր՝ 50, մագիստրոս՝ 13:

2018-2019 ուստարվա ավարտական/ընդունելության քննությանը մասնակցել են նախապատրաստական խմբի 20 ուսանող:

Ավարտական քննությունների արդյունքներով, որոնք համարվում են նաև ընդունելության, **բակալավրիատի** առաջին կուրս է ընդունվել **20 ուսանող**, նրանցից 2-ը չեն կնքել պայմանագիր:

ՀՀ կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարության ուղեգրերով և գիտելիքների ստուգման արդյունքով վճարովի հիմունքներով բակալավրիատի առկա ուսուցմամբ առաջին կուրս է ընդունվել նաև արտասահմանցի **8 դիմորդ:**

Ընդհանուր (մրցութային) հիմունքներով բակալավրիատի առաջին կուրս է ընդունվել **10 արտասահմանցի** (7 առկա, 3 հեռակա):

2018-2019 ուսումնական տարվա բակալավրիատի շրջանավարտներից 8-ն ընդունվել են մագիստրատուրայի առկա ուսուցմամբ առաջին կուրս, նրանցից **2-ը** ՀՀ կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարության ուղեգրերով, **6-ը՝** մրցութային հիմունքներով:

Ֆրանսիայի Լիոնի ազգային բարձրագույն ճարտարապետական դպրոցի (ԼԱԲՃԴ) հետ համագործակցության շրջանակներում մեր համալսարանի ճարտարապետության ֆակուլտետի մագիստրատուրայի առաջին կուրսում մեկ ուսումնական տարի ժամկետով ուսումնառում է ԼԱԲՃԴ **2 ուսանող:**

ՌԴ Հողաշինության պետական համալսարանի (ՀՊՀ) հետ համագործակցության շրջանակներում մեր համալսարանի ճարտարապետության ֆակուլտետի բակալավրիատի III կուրսում մեկ կիսամյակով կազմակերպվել է ՀՊՀ 2 ուսանողի ուսումնառությունը:

2019-2020 ուսումնական տարում արտասահմանյան քաղաքացիների նախապատրաստական խումբ ընդունվել է **11 արտասահմանցի**՝ հայերենով ուսուցանվող խումբ՝ 3, անգլերենով ուսուցանվող խումբ՝ 8:

2019թ. դեկտեմբերի 25-ի դրությամբ համալսարանում սովորում է 160 արտասահմանցի (սփյուռքահայ՝ 142, այլազգի՝ 18).

- նախապատրաստական խումբ – 11,
- բակալավրիատ – 127,
- մագիստրատուրա – 20,
- ասպիրանտուրա – 2:

Արտասահմանցի սովորողների թիվն ըստ կուրսերի և երկրների

25.12.2019թ. դրությամբ

Աղյուսակ 3.1.1

Երկիր Կուրս	Էրան	Միրիա	Հնրկաստան	Վրաստան	ՌԴ	Բրաբ	Լիբանան	Ուկրաինա	Թուրքիա	Ֆրանսիա	Հորդանան	Ղազախստան	Ուզբեկ- ստան	Մարոկո	Եգիպտոս	Ընդամենը
	Նախապատրաստական															
Նախապատրաստական	1-հայ, 1-այլազգի	2-հայ, 1-այլազգի	-	1-հայ	-	-	-	-	-	-	1-այլազգի	-	-	2-այլազգի	2-այլազգի	11
Բակալավրի կրթական ծրագրով																
I	-	13-հայ	2-այլազգի	8-հայ	7-հայ	2-այլազգի	2-հայ	-	-	-	-	1-հայ	1-հայ	-	-	36
II	-	5-հայ	-	11-հայ	5-հայ	-	1-հայ	1-հայ	2-հայ	-	1-հայ	-	-	-	-	26
III	2-հայ	16-հայ	-	5-հայ	8-հայ	1-հայ	1-հայ	-	-	-	-	-	-	-	-	33
IV	2-հայ, 4-այլազգի	13-հայ	-	5-հայ	5-հայ	1-հայ	1-հայ	-	-	-	-	-	-	-	-	31
V	-	-	-	-	-	-	-	-	1-այլազգի	-	-	-	-	-	-	1

Մագիստրոսի կրթական ծրագրով																
I	1-հայ	3-հայ	-	3-հայ	1-հայ	-	-	-	-	2- այլազգի	-	-	-	-	-	10
II	-	3-հայ	-	3-հայ	3-հայ	-	-	-	-	-	-	1-հայ	-	-	-	10
Ասպիրանտուրա																
Ասպիրանտ- ներ	1- այլազ- գի	-	-	-	1-հայ	-	-	-	-	-	-	-	-	-	-	2
Ընդամենը	12	56	2	36	30	4	5	1	3	2	2	2	1	2	2	160

3.2 Միջազգային համագործակցությամբ իրականացված միջոցառումներ

Միջբուհական համաձայնագրերով համագործակցության շրջանակներում իրականացվել են ուսանողների, դասախոսների փոխանակումներ

- Ֆրանսիայի Լիոնի ազգային բարձրագույն ճարտարապետական դպրոցի (ԼԱԲՃԴ) հետ նախագծային աշխատանքներ Երևանում – **12 ուսանող, 2 դասախոս** (մարտի 29-ից ապրիլի 5-ը)
- Ֆրանսիայի Կլերմոն-Ֆերանի ազգային բարձրագույն ճարտարապետական դպրոցի (ԿՖԱԲՃԴ) հետ նախագծային աշխատանքներ Կլերմոն Ֆերանում – **8 ուսանող, 2 դասախոս** (փետրվարի 1-ից 12-ը), Երևանում - **16 ուսանող, 3 դասախոս** (ապրիլի 12-ից 18-ը):
- Թբիլիսիի պետական համալսարանի և Վրաստանի քաղաքային ինստիտուտի կողմից Թբիլիսիում անցկացված միջազգային «U-forum» համաժողով – **1 ասպիրանտ** (մարտի 1-ից 2-ը):
- Ֆրանսիայի Բորդոյի ճարտարապետության և լանդշաֆտի ազգային դպրոցում կայացած REA դպրոցների ցանցի **23-րդ «Տեղական նախագիծ և տարածքային կայունություն»** թեմայով ճարտարապետական միջազգային գիտաժողով – **2 դասախոս** (ապրիլի 14-ից 23-ը):
- ՌԴ Մոսկվա քաղաքում կայացած **NOKIA 2019 միջազգային ուսանողական օլիմպիադա** – **3 ուսանող, 1 դասախոս** (ապրիլի 21-ից 25-ը):
- Գերմանիայի Գյոթինգեն քաղաքի Գեորգ Ավգուստի անվան համալսարանի հետ համագործակցության շրջանակներում և «Վոլքսվագեն» հիմնադրամի աջակցությամբ ՃՀՀԱՀ-դասախոսների և ուսանողների հետ համատեղ երեքշաբաթյան գիտահետազոտական ծրագրի իրականացում Գեդարդի, Չվարթնոցի և Ավանի տաճարների որոշ քայքայված հատվածներում ՃՀՀԱՀ-դասախոսների և ուսանողների հետ համատեղ՝ «Քարերը հայկական ճարտարապետության ժառանգության մեջ» թեմայով (ապրիլի 23-ից մայիսի 12-ը):
- ԱՄՆ Նյու Ջերսիի Ռատգերսի համալսարանի հետ համագործակցության շրջանակներում ուսումնառություն Ռատգերսի համալսարանում - **1 ուսանող** (ապրիլի 29-ից հուլիսի 9-ը):
- Ֆրանսիայի Սենտ Էտիենի ազգային բարձրագույն ճարտարապետական դպրոցի հետ ուսանողական նախագծային աշխատանքներ Երևանում – **17 ուսանող, 2 դասախոս** (ապրիլի 1-ից 18-ը), Սենտ Էտիենում - **18 ուսանող, 1 դասախոս** (հունիսի 18-ից 23-ը):
- ՌԴ Տյումենի արդյունաբերական համալսարանի հետ համագործակցության շրջանակներում նախագծային աշխատանքային շաբաթ Տյումենում – **3 ուսանող, 1 դասախոս** (դեկտեմբերի 2-ից 7-ը):

Համալսարանը մասնակցել է Եվրամիության կողմից ֆինանսավորվող Erasmus+ HERITAG, Erasmus+ InnoCENS, Erasmus+ IACOBUS+, Erasmus+ KA1, All 4 R&D, Erasmus+ FLEXWBL ծրագրերին:

Վերոհիշյալ ծրագրերի շրջանակներում իրականացվել են ՃՇՀԱՀ-ի 21 ուսանողի, 29 դասախոսի, 8 վարչական աշխատակցի և Վիլնյուսի տեխնոլոգիայի և դիզայնի քոլեջի 2 վարչական աշխատակցի, Ուդինեի համալսարանի 2 ներկայացուցչի, Միլանի պոլիտեխնիկի 3 դասախոսի, փոխանակումներ, ՃՇՀԱՀ-ում կազմակերպվել են տեղեկատվական հանդիպումներ, կլոր սեղաններ, սեմինարներ, դասախոսություններ, վարպետության դասեր, աշխատաժողովներ:

Ֆրանկոֆոնիայի համալսարանական գործակալության հետ համագործակցության շրջանակներում 1 վարչական աշխատակից և 1 դասախոսի Ռուսիայի մայրաքաղաք Բուխարեստում մասնակցել է Ֆրանկոֆոնիայի համալսարանական գործակալության տարեկան հավաքին (փետրվարի 11-ից 12-ը):

Արտասահմանյան բուհերի և կազմակերպությունների ներկայացուցիչները ՃՇՀԱՀ-ում

- Թուրքիայի ՄԵՖ համալսարանի, Ազգային հետազոտական Մոսկվայի պետական շինարարական համալսարանի, ԱՄՆ-ի Նյու Ջերսիի Ռատգերսի համալսարանի ներկայացուցիչների, Բրիտանական ճարտարապետական թագավորական ինստիտուտի անդամ, Հարվարդի, Չիկագոյի և Փենսիլվանիայի համալսարանների դասախոսի կողմից համալսարանում անցկացվել են 4 դասախոսություն:
- ԱՄՆ Քորնելի համալսարանի 2 դասախոսի, 12 ուսանողի, ՌԴ Տյոմենի ինդուստրիալ համալսարանի 4 ուսանողի մասնակցությունը ՃՇՀԱՀ ուսանողների հետ համատեղ նախագծային աշխատանքային շաբաթին՝ «Հայաստանում հետխորհրդային շրջանի լքված արդյունաբերական տարածքների վերակազմավորման խնդիրները Չարենցավանի հաստոցաշինական գործարանի օրինակով» թեմայով (փետրվարի 16-ից 22-ը):
- Իտալիայի դիզայնի օրերի շրջանակում իտալացի անվանի ճարտարապետներ Լիվիո Սակկիի, Ստեֆանո Ռագացցոյի, Ֆրանչեսկո Մանյանիի, Բարբարա Կամոչինի, ինժեներ-հետազոտող Մաուրո Աննունցիատոյի այցը ՃՇՀԱՀ, Լիվիո Սակկիի՝ «Ճարտարապետական ժառանգությունը Եթովպիայում. երկու կայսերական համալիրների վերականգնում», Ստեֆանո Ռագացցոյի՝ «Շենքի ընդհանուր տարածքները», Ֆրանչեսկո Մանյանիի՝ «Վենետիկ. վերջին նոր աշխատանքները», Մաուրո Աննունցիատոյի՝ «Խելացի քաղաքներ. ճանապարհային քարտեզ դեպի կայուն քաղաքներ», Բարբարա Կամոչինիի՝ «Քաղաքը խոսում է իր մասին: Բուհի, քաղաքապետարանի և քաղաքային համայնքի միջև գործնական-հետազոտական փորձառություններ» թեմաներով դասախոսությունները (մարտի 22):

- **Հրանտ Դինք հիմնադրամի և ՃՇՀԱՀ** համագործակցության շրջանակներում Թուրքիայի Ստամբուլի MEF համալսարանի 12 ուսանող և ՃՇՀԱՀ 16 ուսանողի, 2 դասախոսի մասնակցությամբ ամառային դպրոցի անցկացում (հունիսի 24-ից հուլիսի 10-ը):

Իրականացվել են **համալսարանի 8 վարչական աշխատակցի, 13 դասախոսի** այցելություններ Շոտլանդիա, Բելգիայի Բրյուսել, Ղազախստանի Ալմաթի, ԳԴՀ Բրաունշվայգ, Իտալիայի Բոլոնիա, Հռոմ, Ռիմինի, Միլան, ՌԴ Նիժնի Նովգորոդ, Շվեյցարիայի Բազել, Ղրղզստանի Բիշքեկ, Հնդկաստանի Նյու Դելի, ԱՄՆ Նյու Յորք քաղաքներ և Նորվեգիայի Թրոմս քաղաքի **5 ներկայացուցչի այցը ՃՇՀԱՀ:**

Համալսարանի 12 դասախոս, 2 ասպիրանտ մասնակցել են **միջազգային սեմինարների, գիտաժողովների, կոնգրեսների, ցուցահանդեսների կլոր սեղանների, մրցույթների** ԱՄԷ Աբու Դաբի, Ղազախստանի Ալմաթի, Վրաստանի Թբիլիսի, Բելառուսի Մինսկ, ՌԴ Մոսկվա, Սանկտ Պետերբուրգ, Կազան, ԳԴՀ Շտուտգարտ, Հունգարիայի Բուդապեշտ քաղաքներում:

Համալսարանում կազմակերպվել են.

- **Հայաստանի Անձավագիտական կենտրոնի 35 ամյակին նվիրված «Քարանձավները որպես բնության և մշակույթի հուշարձաններ» միջազգային գիտաժողովը**, որի մասնակցում էին Իտալիայի, Մեծ Բրիտանիայի, Հոլանդիայի, Գերմանիայի, Միացյալ Նահանգների, ՌԴ-ի, Ավստրալիայի, Ճապոնիայի ներկայացուցիչները՝ հնագիտության, պատմության, երկրաբանության, քարանձավագիտության, ճարտարապետության, ստորգետնյա կառույցների և որմնանկարների վերաբերյալ զեկույցներով (սեպտեմբերի 11-ից 13-ը):

- **Շինարարական բուհերի միջազգային ասոցիացիայի խորհրդի տարեկան նիստը**, որին ներկա էին ՃՇՀԱՀ Հոգաբարձուների խորհրդի նախագահ Վլադ Ասատրյանը, «Շինարարական բուհերի միջազգային ասոցիացիա»-յի նախագահ, Մոսկվայի ազգային հետազոտական պետական շինարարական համալսարանի ռեկտոր Անդրեյ Վոլկովը, ասոցիացիայի անդամ ճարտարապետաշինարարական բուհերի ռեկտորներ, ՌԴ վաստակավոր շինարար, տ.գ.դ., պրոֆեսոր Աշոտ Թամրազյանը, ՀՀ կրթության, գիտության, մշակույթի և սպորտի փոխնախարարի Գրիշա Թամրազյանը, ՀՀ ԱԺ Գիտության, կրթության, մշակույթի, սփյուռքի, երիտասարդության և սպորտի հարցերի մշտական հանձնաժողովի փոխնախագահ Հովհաննես Հովհաննիսյանը, Քաղաքաշինության կոմիտեի նախագահ Վահագն Վերմիշյանը, Հայաստանի Շինարարների միության տնօրեն Գուրգեն Մինասյանը, ՀՀ ճարտարապետների պալատի նախագահ Մկրտիչ Մինասյանը, ՃՇՀԱՀ-ի պրոռեկտորները, պրոֆեսորադասախոսական ողջ անձնակազմը (սեպտեմբերի 25-ից 27-ը):

- «Ճարտարապետություն և շինարարություն – արդի հիմնախնդիրներ» խորագրով միջազգային 11-րդ գիտաժողովը, որին մասնակցում էին Չինաստանի, Լեհաստանի, Ռուսաստանի, Բուլղարիայի, Ամերիկայի Միացյալ Նահանգների, Վրաստանի, Իրանի ճարտարապետաշինարարական համալսարանների ռեկտորներ, դեկաններ, պրոֆեսորներ (հոկտեմբերի 14-ից 16-ը)

Պաշտոնական միջոցառումներ

- ՌԴ Մոսկվայի տնտեսագիտության բարձրագույն դպրոցի պատվիրակության այցը (միջազգային գրասենյակի տնօրեն Ալեքսանդր Դեն, կրթական ծրագրերի միջազգային խթանման կենտրոն՝ Ալեքսեյ Բելով), ծանոթություն համալսարանին, քննարկումներ հետագա հնարավոր համագործակցության վերաբերյալ (հունվարի 30)
- Բուլղարիայի արտակարգ և լիազոր դեսպան Վինչենցո Դել Մոնակոյի այցը ՃՀՀԱՀ՝ իտալական դիպլոմատի օրերի հետ կապված միջոցառումների շրջանակում իտալացի ճարտարապետների՝ «Խելացի քաղաք» խորագրով նախագծերի ներկայացման, ցուցահանդեսի բացման, ուսանողների հետ վարպետության դասեր անցկացնելու մասին հարցերի քննարկման, նպատակով (մարտի 22):
- ՀՀ-ում ՌԴ արտակարգ և լիազոր դեսպան Սերգեյ Կոպիրկինի և «Ռուսհամագործակցություն» դաշնային գործակալության ներկայացուցիչների այցը համալսարան. ծանոթություն արվեստանոցներին, լաբորատորիաներին, հանդիպում ուսանողների հետ (մարտի 27):
- Բուլղարիայի Ուդինեի համալսարանի ռեկտոր, պրոֆեսոր Ալբերտո Ֆելիչե Դե Տոնիի գլխավորած պատվիրակության այցը համալսարան (պատվիրակության կազմում էին նաև միջազգային համագործակցության գծով պրոռեկտոր, պրոֆեսոր Զիորջիո Ալբերտին, գիտական միջազգային գործունեության հարցերով պատասխանատու Աննա Ֆրանջիպանեն, պրոֆեսորներ Դիգրան Դիգրանյանը և Մարիո Պեզետտան). շրջայց համալսարանում, ծանոթություն լաբորատորիաներին և ճարտարապետության ու դիպլոմատի արվեստանոցներին, Էրազմուս+ ծրագրի շրջանակում «Ուսանողների փոխանակման մասին» համաձայնագրի ստորագրում (հունիսի 6-ից 8-ը):
- «Պետրոս Ալոյան»-ի անվան հիմնադրամի, ՀՀ-ում Լիտվայի դեսպանատան և ՃՀՀԱՀ-ի կողմից անցկացվող Լիտվացի պատմաբան, արվեստաբան Յուրգիս Բալտրուշայտիսի անվան ամենամյա մրցանակի հանձնման նպատակով ՀՀ-ում Լիտվայի արտակարգ և լիազոր դեսպան Ինգա Ստանիտե-Տոլոչկիենեի, ՀՀ ճարտարապետների պալատի նախագահ Մկրտիչ Մինասյանի, «Պետրոս Ալոյան»-ի անվան հիմնադրամի տնօրեն Հայկ Ալոյանի այցը համալսարան, մրցանակը հանձնվել է ճարտարապետության ֆակուլտետի մագիստրատուրայի 2-րդ կուրսի ուսանող Լեռնիկ Գալստյանին (նոյեմբերի 5):

- **Բտալիայի արտակարգ և լիազոր դեսպան Վինչենցո Դել Մոնակոյի** այցը ՃՇՀԱՀ՝ ներկա և ապագա ծրագրերի քննարկման, համալսարանի ղեկավար և պրոֆեսորադասախոսական կազմի հետ հանդիպման, 2020թ-ին իտալական դիզայնի և ճարտարապետության օրերը ՃՇՀԱՀ-ում անցկացնելու հետ կապված հարցերի, իտալերեն լեզվի դասընթացների կազմակերպման հարցերի քննարկման նպատակով (դեկտեմբերի 18):

3.3 Միջազգային ուսանողական մրցույթներ

- **Ֆրանսիայի Բորդոյի ճարտարապետության և լանդշաֆտի ազգային դպրոցում** կայացած REA դպրոցների ցանցի 23-րդ **„Տեղական նախագիծ և տարածքային կայունություն“** թեմայով ճարտարապետական միջազգային մրցույթ – **2 ուսանող** (ապրիլի 14-ից 23-ը):
- Ֆրանկոֆոնիայի համալսարանական գործակալության կողմից Բուլղարիայի Պլովդիվ քաղաքում կազմակերպված **Ֆրանսախոս ուսանողների 2019թ. փառատոն – 1 ուսանող** (օգոստոս):
- Ղազախստանի ճարտարապետաշինարարական ակադեմիայի գլխամասային մասնաճյուղի կողմից կազմակերպված **Եվրասիական ճարտարապետաշինարարական և դիզայնի ներկայացման միջազգային փառատոն – ճարտարապետական 16 դիպլոմային նախագիծ** (հոկտեմբերի 23):
- ՌԴ Նիժնի Նովգորոդ քաղաքում անցկացված ճարտարապետություն և դիզայն մասնագիտացումների ավարտական աշխատանքների 28-րդ միջազգային ստուգատես-մրցույթ - **ճարտարապետության ֆակուլտետի 16 դիպլոմային նախագիծ** (11-ն արժանացել են առաջին, 5-ը՝ երկրորդ կարգի դիպլոմների և 1 հատուկ մրցանակի) **և դիզայնի ֆակուլտետի 14 դիպլոմային նախագիծ** (11-ն արժանացել են առաջին, 3-ը՝ երկրորդ կարգի դիպլոմների և դիզայնի ներկայացման միջազգային ասոցիացիայի կողմից՝ հատուկ մրցանակի) (հոկտեմբերի 5-ից 12-ը):
- Տյումենի ճարտարապետության և շինարարության պետական համալսարանում կազմակերպված միջազգային ամենամյա **«Золотая АрхИдея»** ճարտարապետական նախագծերի միջազգային մրցույթ - **ճարտարապետության ֆակուլտետի 5 նախագիծ** (որոնցից 4-ն արժանացել են առաջին կարգի, 1-ը՝ ՌԴ ճարտարապետների միության հատուկ մրցանակի), (ապրիլի 18-ից 21-ը):
- ՌԴ Մոսկվա քաղաքում կայացած **NOKIA 2019 միջազգային ուսանողական օլիմպիադա – 3 ուսանող, 1 դասախոս** (ապրիլի 21-ից 25-ը):

Մարզամշակութային միջոցառումներ

Համալսարանի ուսանողական թիմերի մասնակցությունը սպորտային և մշակութային միջոցառումներին.

- Իտալական «Ֆաբրիկա Եվրոպա» թատերական փառատոն,
- Բելառուսի Հանրապետության Մինսկ քաղաքում «МАПИД» ԲԲԸ-ի կողմից կազմակերպված արտադրական պրակտիկա
- Բուլղարիայի Պլովդիվ քաղաքում կայացած Ֆրանսախոս ուսանողների 2019թ. փառատոն,
- «Ճարտարապետ Արամ Խաչատրյան» հիմնադրամի կողմից անցկացվող ամենամյա մրցանակաբաշխություն,
- Վոլեյբոլի տղամարդկանց Հայաստանի Բարձրագույն խմբի առաջնություն,
- ՀՀ-ում Իտալիայի դեսպանության աջակցությամբ «ՀԱՅԱՍՏԱՆԸ ԱՄԵՆՈՒԻՐԵՔ Է» նախագիծ:

Միջազգային կազմակերպություններին անդամակցություն

- ACB - ԱՊՀ երկրների շինարարության մասնագիտություններով բուհերի ասոցիացիա
- REA-Ֆրանսիայի Կենտրոնական և Արևելյան Եվրոպայի ճարտարապետական բարձրագույն դպրոցների ցանց
- AUF - Ֆրանկոֆոնիայի համալսարանական գործակալություն
- Իտալական “Romualdo Del Bianco Foundation” կազմակերպություն
- Межрегиональная общественная организация содействия архитектурному образованию (МООСАО)

3.4 2020թ. նախատեսվող միջոցառումներ և փոխանակումներ

- Վարկանիշավորման գործընթացի իրականացում:
- Հավատարմագրման գործընթացի իրականացում:
- Երևանում ուսական գիտության և մշակույթի կենտրոնի (Россотрудничество) հետ համագործակցության շրջանակներում ուսաց լեզվի կենտրոնի ստեղծում:
- Ֆրանսիայի Լիոնի ազգային բարձրագույն ճարտարապետական դպրոցի հետ համատեղ ուսանողական նախագծային շարք Երևանում՝ «Նյութեր և քաղաքային կառույցներ՝ ջրից մինչև քար» խորագրով (մարտ - ապրիլ):

- **Իտալական դիզայնի օրերի** անցկացումը ՃՇՀԱՀ-ում, լուսային էֆֆեկտների մասնագետ Ֆրանց Չեռամի և **Նեապոլի Սուոր Օբուլա Բենինկասա** համալսարանի պրոֆեսորների այցը մեր համալսարան՝ համագործակցության պայմանագրի կնքման նպատակով (մարտ):
- **Ֆրանսիայի Կլերմոն Ֆերանի ազգային բարձրագույն ճարտարապետական դպրոցի հետ** համատեղ ուսանողական նախագծային շաբաթներ Ֆրանսիայում (փետրվար-մարտ) և Երևանում (ապրիլ-մայիս):
- **Ֆրանսիայի Սենտ Էտիենի ազգային բարձրագույն ճարտարապետական դպրոցի հետ** համատեղ ուսանողական նախագծային շաբաթներ Ֆրանսիայում և Երևանում (մարտ, հունիս):
- Մասնակցություն **REA-24** (Ֆրանսիայի և Կենտրոնական ու Արևելյան Եվրոպայի ճարտարապետական բարձրագույն դպրոցների ցանցի) կողմից կազմակերպվող հերթական միջազգային ուսանողական ստուգատեսին և գիտաժողովին (ապրիլ):
- **"IACOBUS+" ծրագրի** շրջանակում ուսանողական նախագծային շաբաթներ Վենետիկում (մարտի 9-ից 14-ը), Ռեգենսբուրգում (մայիսի 23-ից 25-ը):
- **Գերմանիայի Գյոթինգենի Գեորգ Ավգուստ համալսարանի** հետ համագործակցության շրջանակներում **3-րդ ամառային դպրոցի անցկացում** Երևանում (հունիսի 8-ից 18-ը):
- **Նյու Ջերսիի Ռատգերսի համալսարանի և Ամերիկահայ ճարտարագետների և գիտնականների ներկայացուցիչների** այց ՃՇՀԱՀ դասախոսություններ ներկայացնելու նպատակով (գարուն կամ աշուն):
- **«Ճարտարապետության և շինարարության արդի հիմնախնդիրները» խորագրով 12-րդ միջազգային գիտաժողովի** կազմակերպում և անցկացում Սանկտ Պետերբուրգի ճարտարապետաշինարարական համալսարանում (սեպտեմբեր-հոկտեմբեր):
- **Նյու Ջերսիի Ռատգերսի համալսարանի և Ամերիկահայ ճարտարագետների և գիտնականների ներկայացուցիչների առաջարկով թվայնացված նախագծման կենտրոնի** ստեղծում: «Շինարարական նախագծերի կառավարում», «Տրանսպորտային երթուղիների կառուցում և սպասարկում», «Պատվածքների կառավարում», «Կամուրջների կառավարում» մասնագիտություններով մեկամյա մագիստրոսական ծրագրերի ներդրում:
- Գործառույթներ Ֆրանկոֆոնիայի համալսարանական գործակալության (AUF) շրջանակներում, որը նախատեսում է Ֆրանկոֆոն բուհերի հետ համագործակցության խթանում, ֆրանկոֆոն ծրագրերի մասնակցություն, ֆրանկոֆոնիայի վերաբերյալ Հայաստանում միջոցառումների կազմակերպում, միջազգային վարկանիշավորման նպատակով փորձագերի հրավիրում: Այդ նպատակով Ֆրանկոֆոնիայի համալսարանական գործակալության (AUF) նախատեսում է 3500 եվրո ֆինանսավորում:

Erasmus+ KA1 փոխանակման ծրագրի շրջանակում.

- **3 դասախոսի, 1 վարչական աշխատակցի այցը և 4 ուսանողի** ուսումնառություն Միլանի պոլիտեխնիկական համալսարանում 5 ամիս ժամկետով,
- **3 ուսանողի** ուսումնառություն Ալկալայի համալսարանում 5 ամիս ժամկետով,
- **1 ուսանողի, 1 դասախոսի** փոխանակում Վարշավայի էկոլոգիայի և դիզայնի համալսարանում,
- **3 ուսանողի 1 դասախոսի** փոխանակում Ուդինեի համալսարանում:

4. ՈՐԱԿԻ ԱՊԱՀՈՎՈՒՄ

Որակի ապահովման կենտրոնը՝ համաձայն 2019թ. հունվար-դեկտեմբեր ամիսների գործողությունների պլանի, կազմակերպել և իրականացրել է հետևյալ գործողությունները 3 հիմնական ուղղություններով.

1. Որակի ներքին ապահովման գործընթացներ,
2. Որակի արտաքին ապահովման գործընթացներ,
3. Միջազգային և հայաստանյան մրցութային ծրագրերի դիմում-հայտերի, առաջարկների մշակում:


Որակի արտաքին ապահովման նպատակով մշակվել է և «Մասնագիտական կրթության որակի ապահովման կենտրոն» հիմնադրամին է ներկայացվել ՃՇՀԱՀ ինստիտուցիոնալ հավատարմագրման դիմում-հայտը:

Որակի ներքին ապահովման նպատակով իրականացվել են.

1. Դասալսումներ,
2. Ուսանողական հարցումներ,
3. Կրթական ծրագրերի մոնիթորինգ և բարելավում:

Միջազգային և հայաստանյան մրցութային ծրագրերին մասնակցելու նպատակով պատրաստվել և ներկայացվել են թվով 8 դիմում-հայտեր: 2019 թվականի ընթացքում Որակի ապահովման կենտրոնը մշակել և Horizon 2020 հետազոտական ծրագրին ներկայացրել է 1 առաջարկ:

Հաշվետու ուսումնականական տարում որակի ապահովման ուղղությամբ իրականացված աշխատանքները ներկայացված են ստորև ներկայացված սխեմայում:



5. ՄԱՐԴԿԱՅԻՆ ՌԵՍՈՒՐՍՆԵՐԻ ԿԱՌԱՎԱՐՈՒՄ

2019թ.-ին ՃՀԱՀ-ում աշխատակիցների թիվը կազմել է 831 անձ, որոնք զբաղեցրել են 585.7 հաստիք: Աղյուսակ 5.1-ում ներկայացված են տվյալներ աշխատողների վերաբերյալ ըստ տարակարգերի (2020թ.-ի հունվարի 8-ի դրությամբ):

Աղյուսակ 5.1

№	Կազմ	Աշխատողների թվաքանակ (<i>մարդ</i>)	Հաստիք (<i>դրույք</i>)
1	Համալսարան		
1.1	<i>Վարչական</i>	105	98.5
1.2	<i>Պրոֆեսորադասախոսական</i>	432	296.25
	<i>որից՝ ժամավճարային աշխատողներ</i>	30	
1.3	<i>Ուս.օժանդակ</i>	75	68
1.4	<i>Սպասարկող</i>	33	32
1.5	<i>Համալսարանի գիտական և ծրագրային այլ աշխատ.</i>	112	
	<i>որից՝ հիմնական աշխատողներ</i>	28	
	<i>համալսարանից ներգրավված աշխատողներ</i>	83	
	Ընդամենը	673	494.75
2	Մ.Աբեղյանի անվ.ավագ դպրոց		
2.1	<i>Վարչական</i>	8	8
2.2	<i>Մանկավարժներ</i>	45	41.7
2.3	<i>Ուս.օժանդակ</i>	0	0
2.4	<i>Սպասարկող</i>	7	7
	Ընդամենը	60	56.7
3	Միջին մասնագիտական կրթության քոլեջ		
3.1	<i>Վարչական</i>	9	8.5
3.2	<i>Պրոֆեսորադասախոսական</i>	79	16
3.3	<i>Ուս.օժանդակ</i>	1	1
3.4	<i>Սպասարկող</i>	9	8.75
	Ընդամենը	98	34.25
	Ընդհանուրը*	831	585.7

* - թվաքանակում ներառված է ֆիզարձակուրդում գտնվող 18 աշխատող՝ 15.25 դրույք
 Աղյուսակ 5.2-ում ներկայացված են տվյալներ գիտական աստիճան և կոչում ունեցող
 աշխատողների վերաբերյալ (2020թ.-ի հունվարի 8-ի դրությամբ):

Աղյուսակ 5.2

ԳԻՏԱԿԱՆ ԱՍՏԻՃԱՆ, ԿՈՉՈՒՄ	ՔԱՆԱԿ
Գիտությունների դոկտոր	44
Գիտությունների թեկնածու	193
Պրոֆեսոր	67
Դոցենտ	155
ՀՀ ԳԱԱ ակադեմիկոս	1
ՀՀ ԳԱԱ թղթակից ամդամ	1
ՀՀ գիտության վաստակավոր գործիչ	9

Աղյուսակ 5.3-ում ներկայացված են տվյալներ ՃՇՀԱՀ պրոֆեսորադասախոսական
 կազմի միջին տարիքային ցուցանիշի վերաբերյալ:

Աղյուսակ 5.3

№	<i>Հիմնական, համատեղություն</i>	2018թ.		2019 թ.	
		աշխատողներ ի միջին թվաքանակը	միջին տարիք	աշխատողներ ի միջին թվաքանակը	միջին տարի ք
1	Հիմնական	330	51	318	51
2	Համատեղություն	121	49	161	52
	Ընդամենը	451	50	479	51

6. ԱՇԽԱՏԱՆՔ ՈՒՍԱՆՈՂՆԵՐԻ ԵՎ ՇՐՋԱՆԱՎԱՐՏՆԵՐԻ ՀԵՏ

6.1 Ուսանողական խորհուրդ

ՃՇՀԱՀ Ուսանողական խորհուրդը հաշվետու ժամանակահատվածում իրականացրել է ծրագրեր՝ նպատակ ունենալով նպաստել ուսանողական կարողությունների զարգացմանը: Ուսանողական խորհրդի աշխատանքներում ներառված են նաև մշտական խորհրդատվության տրամադրումը ուսանողներին, ուսանողական միջոցառումների վերաբերյալ տեղեկատվության ապահովումը, ուսանողների տարբեր խնդիրների քննարկումներն ու ներկայացումը բուհի ղեկավար մարմին:

ՈւՆ-ն իր աշխատանքները կազմակերպում և իրականացնում է ֆակուլտետային ուսանողական խորհուրդների, մշակութային, սպորտի և ազատ ժամանցի, արտաքին կապերի, լրատվության և հասարակայնության հետ կապերի հանձնաժողովների միջոցով:

Հաշվետու ժամանակահատվածում Ուսանողական խորհրդի կողմից կազմակերպվել է տարատեսակ սոցիալական, կրթական, մշակութային, սպորտային, ճանաչողական, հայրենասիրական, ինտելեկտուալ, բարեգործական ծրագրեր:

ՈւՆ-ի սոցիալական բնույթի ծրագրերից հատկանշական են՝ սոցիալապես անապահով և հասարակայնապես ակտիվ ուսանողների՝ համալսարանի ճաշարանից և Երևանի մետրոպոլիտենի երթերից անվճար օգտվելու ծրագրերը, որոնց շրջանակներում տարեկան շուրջ 200 ուսանող հնարավորություն է ունեցել օգտվելու այս ծրագրերից:

ՈւՆ-ի աշխատանքների մեջ առանձնահատուկ նշանակություն ունի Արցախի Հանրապետությունում 12 տարի անընդմեջ իրականացվող «Հայերի հաղթանակի ուղին» խորագրով մշակութային, ռազմահայրենասիրական և բարեգործական ծրագիրը: Ծրագրի շրջանակներում ԱՀ-ում և ՊԲ-ի զորամասերում անցկացվել են թատերական, համերգային միջոցառումներ, բանակին ցուցաբերվել է շուրջ 70. 000. 000 (յոթանասուն միլիոն) ՀՀ դրամին համարժեք օգնություն, որոնց մեջ ներառվել են հիգիենայի պարագաների հավաքածու զինվորներին՝ զորամասերին առաջին անհրաժեշտության պարագաներ, տեխնիկական սարքավորումներ, զինվորական սարքավորումներ, հատուկ անձրևապաշտպան վերարկուներ և այլն: Իրականացվել է նաև զորամասերի տարածքում ինժեներական և ստեղծագործական աշխատանքներ, մասնավորապես զորամասի պատերին նկարվել են քառօրյա պատերազմում իրենց կյանքը չխնայած հերոսների դիմանկարները: Ուսանողների համար կազմակերպվել է հատուկ ճանաչողական էքսկուրսիաներ Արցախի պատմական և տեսարժան վայրեր, զինվորական պատրաստվածության հատուկ դասընթացներ, կրակային վարժանքներ և այլն, ինչպես նաև Ստեփանակերտի հանրապետական բժշկական կենտրոնում ուսանողները իրականացրել են բարեգործական արյունատվոթ-

յուն: Ծրագիրը հնարավորություն է տվել 400 ուսանողի այցելել Արցախի Հանրապետություն, ճանաչել Արցախ աշխարհը, ծանոթանալ զինվորական առօրյային և ամրապնդելու բանակ-հասարակություն-երիտասարդություն կապը:

Հատկանշական ծրագրերից է ամառային արձակուրդների շրջանում, 2016 թվականին մեկնարկած, մեկ շաբաթ տևողությամբ վրանային «Երիտասարդ ինժեներների ճամբար» խորագիրը կրող ուսանողական, ռազմահայրենասիրական ծրագիրը, որին յուրաքանչյուր տարի մասնակցություն են ցուցաբերել ավելի քան 100 ուսանող: Ճամբարի շրջակներում ուսանողները բաժանված են եղել ջոկատների, որոնք կոչվել են հայկական արքայատոհմերի անուններով: Ճամբարի ընթացքում կազմակերպվել և անցկացվել է սպորտային բազմաթիվ խաղեր, ճանաչողական և ուսուցողական արշավներ, հանդիպում-դասընթացներ, ազգային երգերի և պարերի, առաջին բուժօգնության, արտակարգ իրավիճակներում պաշտպանության և այլ ուսուցողական բնույթի դասընթացներ:

ՃՇՀԱՀ ուսանողական խորհուրդը հաշվետու ուսումնական տարում շարունակել է իր գործունեությունն ու ծրագրերի իրականացումը՝ ՈւՄ կանոնադրության համաձայն պաշտպանելով ուսանողների շահերն ու իրավունքները: Ուսանողական խորհուրդն ակտիվ մասնակցություն է ունեցել ՃՇՀԱՀ կառավարմանը տարբեր հարթակներում (ՃՇՀԱՀ հոգաբարձուների խորհուրդ, գիտական խորհուրդ, ֆակուլտետների գիտական խորհուրդներ)՝ բարձրաձայնելով ուսանողությանը հուզող խնդիրները և դրանց լուծման մեխանիզմները: Ուսանողական խորհրդի միջոցով ուսանողները մասնակցել են ուսումնական գործընթացի կազմակերպմանը, համագործակցել համալսարանի ղեկավարման տարբեր օղակների և ստորաբաժանումների հետ: ՈւՄ-ն իրականացրել է ուսանողների իրավունքների և պարտականությունների իրազեկման դասընթացներ, սեմինարներ և միավորել է համալսարանի ուսանողական կառույցների ջանքերը՝ նպաստելով ուսանողության համար արդյունավետ աշխատանքային մթնոլորտի ձևավորմանը: ՃՇՀԱՀ ուսանողական խորհուրդը ֆակուլտետային ուսանողական խորհուրդների և հանձնաժողովների համակարգված և հստակորեն ուղղորդված աշխատանքով նպաստել է ուսանողների գիտական, կրթական, հոգևոր, մշակութային, ռազմահայրենասիրական դաստիարակության, ստեղծագործական և ֆիզիկական զարգացմանը, կազմակերպել է ուսանողների ազատ ժամանցն ու հանգիստը, ինչպես նաև զբաղվել է ուսանողներին հուզող բազմաթիվ այլ խնդիրների բարձրաձայնմամբ և լուծմամբ:

2019 թվականի ընթացքում ՃՇՀԱՀ ՈւՄ-ն կազմակերպել է շուրջ 200 միջոցառում: ՃՇՀԱՀ ՈւՄ նախագահությունը, ֆակուլտետային ուսանողական խորհուրդները և հանձնաժողովներն ապահովել են ուսխորհրդի բնականոն գործունեությունը, սահմանել համընդհանուր ռազմավարական նպատակներ և խնդիրներ, ինչպես նաև ներդրել նոր մոտեցումներ և մեխանիզմներ արդյունավետ գործունեություն իրականացնելու համար:

ՈւՆԻ աշխատանքներում առաջնային նշանակություն ունի ուսանողներին գործող կրթական համակարգի, իրենց իրավունքների և պարտականությունների և ներհամալսարանական կյանքի մասին իրազեկելու խնդիրը: Կազմակերպվել են քննարկումներ, սեմինարներ, մասնավորապես՝ 1-ին կուրսեցիներին իրենց իրավունքներին և պարտականություններին ծանոթացնելու, ինչպես նաև գործող կրթական համակարգը ուսանողների համար ավելի մատչելի դարձնելու նպատակով: Առաջին կուրսեցիների համար անցկացվել է ամենամյա «Ուսանողական հիմնախնդիրները ՃՇՀԱՀ-ում» երկվույ սեմինար-դասընթացը, որի նպատակը ուսանողներին ուսանողական ինքնակառավարման գործընթացի մանրամասների և իրավական նորմերի մասին համընդհանուր գիտելիքներ տալն էր: Ծրագրին մասնակցել է շուրջ 500 առաջին կուրսեցի, որոնց մեծ մասը հետագայում համալրել է ՈւՆԻ անդամների շարքերը: Սոցիալական ցանցում ՈւՆԻ ֆեյսբուքյան և ինստագրամյան էջերը գործել են բավականին ակտիվ, և ունեցել զգալի որակական տեղաշարժեր: Մասնավորապես ֆեյսբուքյան էջում 2300 հետևորդ՝ շաբաթական ունենալով ավելի քան 1000 դիտելիություն:

Իրականացվել է մարզական միջոցառումների շարք, որի շրջանակում տեղի են ունեցել ֆուտբոլի, սեղանի թենիսի, շախմատի, հեծանվավազքի, վոլեյբոլի, բոուլինգի միջֆակուլտետային մրցաշարեր: ՃՇՀԱՀ ուսանողական խորհուրդը կազմակերպել է բոուլինգի միջբուհական առաջնություն: Նշենք, որ 2019 թվականին անկացված բոուլինգի զարնանային և աշնանային միջբուհական խաղերին մասնակցել է 15 բուհերի ուսանողական ներկայացուցիչներ:

Տարվա ընթացքում ՈւՆԻ-ն ակտիվ համագործակցել է Հայ Առաքելական եկեղեցու հետ և համատեղ իրականացրել միջոցառումներ: Մասնավորապես Հայ Առաքելական եղեկեցու ներկայացուցիչների հետ համալսարանում նշվել է տերունի անշարժ տոներից՝ Տեառնընդառաջը, Սուրբ Հարության տոնը, որոնց շրջանակներում հոգևոր պատասխանատուները ներկայացրել են տոների խորհուրդները և համտեսել ուսանողների ձեռքով պատրաստված հատուկ խորհուրդ և նշանակություն ունեցող ուտեստներ:

ՈւՆԻ-ի և Ոսկրածուծի Դոնորների Հայկական Ռեեստրի համագործակցության արդյունքում համալսարանում անցկացվել է դոնորատվության օր, որի շրջանակներում ուսանողները և համալսարանի աշխատակազմը հնարավորություն ունեցան մասնակցելու մարդասիրական ակցիային:

Հաշվետու տարվա ընթացքում ֆակուլտետային ուսանողական խորհուրդները իրականացրել են տարատեսակ մասնագիտական հանդիպումներ, դասախոսություններ, սեմինարներ.

- հանդիպում-դասախոսություն «SKILLSHOP», «Ստորակետ», «SNKH», «Տարբերակ» ճարտարապետական արվեստանոցների ներկայացուցիչների հետ,

- սեմինար «Անձնական տվյալների պաշտպանություն» թեմայով ԱՏՊ գործակալության տնօրենի հետ,
- դասընթացներ՝ Էթիկայի դպրոցի մասնագետների հետ՝ «բուհական էթիկա» և «կոնֆլիկտային մարդիկ» թեմաներով
- հանդիպում-դասընթաց՝ «[ONE WAY Tour](#)» զբոսաշրջային գործակալության հիմնադիրների հետ
- վերապատրաստում Արփի-Սուլար ընկերության ներկայացուցիչների հետ

Ուսանողական խորհուրդը նաև բազմամարդ երթերի և մոմավառությունների միջոցով իր հարգանքի տուրքն է մատուցել 1915թ-ի Ցեղասպանության 1. 5 միլիոն անմեղ զոհերի, արցախյան և քառօրյա պատերազմների հերոսների հիշատակներին:

Ուսանողական խորհուրդը «Էմիլի Արեգակ» բազմակի հաշմանդամություն ունեցող երեխաների և երիտասարդների կենտրոնի հետ ունեցած համագործակցության արդյունքում կամավորության սկզբունքով իրականացրել է Գյումրիում գտնվող «Արեգակ փուռ և սրճարան»-ի բրենդավորման, դիզայներական և ճարտարապետական ձևավորման նախագծերի մրցույթ:

ՈւԽ-ն ակտիվորեն մասնակցել է համապետական և համաքաղաքային շաբաթօրյակներին, բնապահպանական միջոցառումներին և փառատոններին: Մասնավորապես մեծ ակտիվությամբ ներգրավված է եղել «Սևանի ազգային պարկ» բնապահպանական գոտում առաջին անգամ անցկացվող «Էկո Ֆիշ Ֆեստ» փառատոնին և Գյումրի քաղաքի «Դրուժբա» պատմամշակութային հուշարձան-շատրվանի պահպանման և վերակառուցման աշխատանքներում:

Ուսանողական խորհրդի կողմից տարվա ընթացքում կազմակերպվել և անցկացվել են բազմաբնույթ, ճանաչողական էքսկուրսիաներ, որոնց շրջանակում շուրջ 500 ուսանող այցելել է Հայաստանի պատմամշակութային վայրեր՝ ծանոթացել դրանց հետ կապված պատմությանը և ճարտարապետական առանձնահատկություններին:

Ուսանողական խորհրդի նախաձեռնությամբ կազմակերպվել և հանդիսավոր կերպով շրջանավարտներին և առաջին կուրսի ուսանողներին հանձնվել են, համապատասխանաբար, ավարտական վկայականները և ստուգարքային գրքույկներն ու ուսանողական տոմսերը:

Նաև տեղի է ունեցել մասնագիտական առարկաների վերապատրաստման դասընթացներ բարձր կուրսի ուսանողների կողմից, արտալսարանային պայմաններում իրականացվել են ճեպանկարներ, գունանկար և գծանկար առարկայի հիման վրա «Գույնը հայտնի նկարիչների աչքերով» թեմայով առաջին կուրսեցիների համար անցկացվել է «Եկեք ստեղծենք մեծ արվեստ» խորագրով մրցույթ:

Հատկանշական էր տարվա ավարտին ուսանողական խորհրդի և «Էկոնոմիկայի իրավունքի և կառավարման» ամբիոնի հետ համատեղ կազմակերպված «Դարձիր Սանտա» մարդասիրական և բարեգործական ակցիան, որի շրջանակներում ուսանողական խորհուրդը հավաքագրել էր Տավուշի մարզի՝ Չինարի, Այգեպար, Չորաթան և Ներքին Կարմիրաղբյուր սահմանամերձ գյուղերի սոցիալապես անապահով 3-10 տարեկան երեխաների կողմից Ձմեռ պապիկին գրված նամակները: Համալսարանի ղեկավարության, պրոֆեսորադասախոսական անձնակազմի և ուսանողության անձնական միջոցների հաշվին ձեռք են բերվել երեխաների նամակներում գրված նվերները, որոնք ուսանողական խորհրդի ներկայացուցիչները տարեմուտին այցելելով սահմանամերձ գյուղեր անակնկալ կերպով հանձնեցին նամակների հեղինակներին:

6.2 Շրջանավարտների կարիերային ուղղված աշխատանքներ

Շրջանավարտների աջակցման և կարիերայի կենտրոնը 2014 թվականից բուհում ստեղծել է շրջանավարտների էլեկտրոնային բազա, որի միջոցով մշտապես իրազեկում է թափուր աշխատատեղերի, միջազգային և տեղական գիտաժողովների, բուհում իրականացվող լրացուցիչ կրթության դասընթացների և այլ օգտակար տեղեկատվության մասին: Բուհի 2018-2019 ուսումնական տարվա առկա և հեռակա ուսուցման բակալավրի, մագիստրատուրայի և ասպիրանտուրայի 754 շրջանավարտներից 747-ը գրանցվել են կարիերայի կենտրոնի էլեկտրոնային բազայում (**շրջանավարտների 99.1%**): Այն շրջանավարտները, ովքեր գրանցված չեն էլեկտրոնային բազայում կենտրոնի կողմից ներկայացվող տեղեկատվությանը ծանոթանում են բուհի գլխավոր կայքէջից և կարիերայի կենտրոնի սոց. ցանցից:

Պետք է նշել նաև, որ կարիերայի կենտրոնի միջոցով է ապահովվում Տեմպուս ծրագրի շրջանակներում հայաստանյան բուհերում ներդրված «Hen-Gear» էլեկտրոնային պորտալում շրջանավարտների գրանցումը, որը նպաստում է շրջանավարտ-գործատու կապի ամրապնդմանը:

Շրջանավարտների աջակցման և կարիերայի կենտրոնը ողջ տարվա ընթացքում մասնակցում է նախարարությունների, միջազգային և տեղական կազմակերպությունների կողմից իրականացվող կլոր-սեղան քննարկումներին, սեմինարներին և վերապատրաստման ծրագրերին:

7. ՖԻՆԱՆՍԱՏՆՏԵՍԱԿԱՆ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅՈՒՆ

Հաշվետու տարում ՃՇՀԱՀ ֆինանսական գործունեությունը ներկայացված է կից հավելվածում՝ 2019թ. նախահաշիվ և կատարողական:

8. ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

Հաշվետու տարում ՃՇՀԱՀ-ում իրականացվել են աշխատողների սոցիալական վիճակի բարելավման միջոցառումներ՝

- պրոֆեսորադասախոսական կազմի աշխատավարձի բարձրացում՝ 10%-ով,
- վարչական աշխատողների աշխատավարձի բարձրացում՝ 8%-ով,
- վերանայվել է ամբիոնի վարիչի աշխատավարձի հաշվարկման մեթոդաբանությունը, որի շնորհիվ ներդրվել է ամբիոնի վարիչի վարչական գործունեության աշխատավարձի հաշվարկման համակարգ,
- ապահովվել է աշխատողների նվազագույն աշխատավարձը: